

քրդական կառավարութիւնը, ինչպէս և ամեն մի ասի-  
ական կառավարութիւն, լաւ կամ վատ էր նայած թէ  
ինչ անձնաւորութիւն է կառավարողը։ Այսպէս, Ոստա-  
նի էմիր Մէլիքին Մեծոփեցին անուանում է «բարեբարոյ  
և սիրող և ողորմած քրիստոնէից»<sup>1)</sup>, Բայց կայ և  
«նենգամիտ և անողորմ քուրդն Բաշխոյ»<sup>2)</sup>, որ տան-  
ջում կոտորում է հայերին։ Ոստանի Մէլիքին աւելի  
բացառութիւն կարելի է համարել՝ քան քրդական ընդ-  
հանրացած տիպ։

Հայերը քրդական լուծին ենթարկուած էին իրանց  
հին, աւանդական համբերատարութեամբ։ Մի ձեռագիր  
յիշատակարան ասում է. «Գրեցաւ Սուրբ Աւետարանս  
ի թուաբերութեանս Հայոց ԶԴ. ի դառն և նեղ ժամա-  
նակիս... ի մեր քուրդ Ամիրիս՝ ամիրզայ Ղասըմիս, զոր  
Տէր Աստուած անյաղթելի պահեսցէ զսա և քաղցրա-  
ցուցէ զսիրտ սորա ընդդէմ քրիստոնէիցս»<sup>3)</sup>։ Քուրդ  
բռնաւորի համար արած այս հպատակական բարեմաղ-  
թութեան մէջ ուշագրաւ է մանաւանդ «մեր» յատկա-  
ցուցիչը։ Եւ սա մի պատահական երևոյթ չէ։ Բազմա-  
թիւ են այն յիշատակարանները, ուր հայ գրողը քուրդ  
իշխանութիւնը անուանում է «մեր»։ Օրինակ, «և մեր  
ամիրութեանս Մէլիք Շարաֆին», «և ի մեր քուրդ ա-  
միրիս՝ ամիր Դայադիս»։ Մի տեղ այս Դայադի մասին  
նոյնիսկ ասուած է. «և ի թագաւորութեանս մերոյ ա-  
միր Դայուտի» և աւելացրուած է. «Տէր Աստուած պա-  
հեսցէ անսասան զաթոռ... զթագաւորական մերոյ ազ-  
ին»<sup>4)</sup>։

Հպատակների այս վերաբերմունքը, իհարկ, ոչինչ

<sup>1)</sup> Նոյն տեսակ վկայութիւն ոչ միայն Մէլիքի, այլ և նրա հայր Ե-  
պդինի մասին տալիս են և ձեռագրերի յիշատակարանները (Տ. Լ. Վ. Փիր-  
դալէմեան—«Նօտարք Հայոց», Կ. Պոլիս, եր. 137)։ Եւ սակայն նոյն բարե-  
սիրտ Եղիշին ամիրան, ֆանատիկոս հոգևորականութեան պահանջով, սպա-  
նել տուեց Աղթամարի Զաքարիա կաթողիկոսին...»

<sup>2)</sup> Մեծոփեցի, եր. 86։

<sup>3)</sup> «Նօտարք Հայոց», եր. 181.

<sup>4)</sup> Անդ, եր. 97.

արգելք չէր որ քրդութիւնը իր աւերումներն ու կեղեւ քումները գործէ։ Գրաւոր յիշատակարանները համարեա երբէք չեն յիշատակում քուրդ կամ «Մարաց» ազգը առանց «նենգամիտ», «անողորմ», «պիղծ», «արիւնարբու» և այլ այսպիսի յորջորջումների։ Թովմա Արծրունին նկարագրում է քրդերի խմբական յարձակումը հայերի վրայ, երբ սրանք Պարսկաստանից խուժան զօրքերի առջև փախչում էին Խլաթ քաղաքը. «Յանկարծակի հասին ի վերայ ամենայն Քուրդ և Քրդաստան ի լեռանց և ի բլրաց, և սուր հանեալ ահարեկ արարեալ զամենայն տառապեալ ազգս մեր սրախոխող արարեալ կամէր կորուսանել առհասարակ զսմենեսեան, Եւ այնքան ահազին լինէր օրն այն ի յահէ և յերկիւղի և ի գոչմանէ պիղծ և արիւնարբու ազգին Մարաց, մինչ զի իբրև օր դատաստանին լինէր»<sup>1)</sup>։ Իսկ առօրեայ, անհատական կեղեքումների, կողոպուտների, առեանգութիւնների դէպքերը ժամանակակիցները գրի չեն առել։ Եւ այդ անկարելի էլ էր, նախ այն պատճառով որ նըրանք դեռ Աստուծու շնորհն էին հասարակական աղէտների հետ համեմատած, որոնք այնքան յաճախ էին կըրկնւում, և երկրորդ որովհետև դաժան ժամանակի հասկացողութեամբ անհատական դէպքերը թէ հասկանալի էին ըստ ինքեան և թէ բնական։ Բացառութիւն կազմում էին նահատակութիւնները կրօնի համար, որոնք նկարագրուած են վկայաբանութիւնների մէջ<sup>2)</sup>։ Այդտեղ տեսնում ենք նոյն իրականութիւնը, որ այսօր էլ տիրում է Ասիական Թիւրքիայի հայաբնակ նահանգներում։

Քրդական տէրութիւնը մտաւ Օսմանեան իշխանութեան տակ 1516 թուականին, Առևլթան Սէլիմի ժամանակ։ Այդ նուաճումը տեղի ունեցաւ ոչ այնքան զէնքի ոյժով, որքան քուրդ Մօլլա-Իդրիսի խաղաղ ջանքերով,

<sup>1)</sup> Մեծոփեցի, Էր. 108,

<sup>2)</sup> Տ. Յ. Մանանդեան և Հ. Աճառեան—«Հայոց Նոր Վկաները», Վաղարշապատ, 1903.

որ համոզեց քուրդ էմիրներին և բէյերին հպատակուել օսմանեան փաղիշահներին։ Օսմանեան պատմութիւնը հաղորդում է<sup>1)</sup>) որ քրդերը իրանց ձեռքում ունէին 19 գաւառ. դրանցից 11 հատը, գլխաւորապէս այն գաւառներից, որոնք գտնւում էին Միջազէտքում և Սիրիայում, միացրուեցին Թիւրքիայի նահանգներին, իսկ 8 հատը, որոնք գտնւում էին լեռնաստաններում, մնացին քուրդ իշխողների ձեռքին։ Նշանակում է որ Հայաստանի այն գաւառների վերաբերմամբ, որոնք պատկանում էին քրդերին, օսմանեան տիրապետութիւնը անուանական էր և չը վերացրեց հին դրութիւնը։ Նոյն իսկ այս անուանական տիրապետութիւնը պահպանելու համար էլ օսմանեան կառավարութիւնը ստիպուած էր յաճախ զօրքեր մտցնել քրդական իշխանութիւնների մէջ և դարձընել երկիրը պատերազմների և աւելումների դաշտ։ Եթէ աւելացնենք այս հանգամանքի վրայ և այն, որ քուրդ իշխանաւորներն էլ համարեա շարունակ ունէին իրանց ներքին կոփիները, փոխադարձ արիւնոտ ընդհարումները մեզ համար պարզ կը լինի թէ ինչ սոսկալի տառապանքների մէջ էր ապրում հպատակ հայ ժողովուրդը։

XVIII դարի պատմութիւնից վերցրած մի քանի տեսարաններ կը լուսաբանեն այդ դրութիւնը։

Ամենամեծ և հզօր քրդական իշխանութիւնը այդ դարի սկզբում Բաղէշի խանութիւնն էր, որի սահմանները տարածում էին Վանից մինչև Դիարբէքիր։ Միայն Բաղէշի իշխանն ունէր «իսան» տիտղոսը, մնացած քուրդ իշխողները կոչում էին բէյ։ Շատ բէյեր, որոնց թւում և Մուշի բէյը, հպատակւում էին Բաղէշին։ Խանը նոյնիսկ պղնձի դրամ էր կտրում իր անունով։ Բաղէշի այդ մեծ իշխանապետութիւնը հաստատուեց XVII դարում, երբ տեղական քուրդ բէյը փախաւ Պարսկաստան, իսկ նրա տեղը Պարսկաստանից եկաւ մի ուրիշ քուրդ իշ-

1) Հ. Գ. Վ. Ալվարովիկի—«Պատմութիւն Օսմանեան», Հատ. Ա., Վենետիկ, 1841, էր. 280.

խան։ Մօտ երկու հարիւր տարի գոյութիւն պահպանելով, խանութիւնը 1741 թուականին յանկարծ իրան տեսաւ աւելի մի զօրեղ հակառակորդի առաջ։ Դա նրա ստորադրեալներից մէկն էր, Մուշի Ալայէդդինը բէյը, որ կարողացել էր կազմակերպել զինուորական ազգուոյժ և կառուցել էր իր համար մի անառիկ բերդ Մուշի մօտ։ Յենուելով այդ ոյժի վրայ, Ալայէդդինը բռնացաւ Բաղէշի խանի վրայ։ Խանը ունէր 25 հազար ձիաւոր և բազմաթիւ հետևակ հրացանաձիգ քուրդ զինուորներ։ Ալայէդդինը հանեց այդ բանակի դէմ 70 հազար մարդ։ Արդէն այնքան բռնացել էր այդ բէյը, որ Բաղէշի խաներին ինքն էր նշանակում, մինչդեռ մինչև այդ՝ Բաղէշն էր իր ցանկացած մարդուն Մուշի բէյնշանակում։

Պատրաստում էր մի ահաւոր քրդական նոր բռնապետութիւն, որին կամայ-ակամայ պիտի հպատակուէին և շրջակայ բոլոր բէյերը։ Բայց թիւրքաց կառավարութիւնը միջամտեց, յենուելով բէյերի գանգատների վրայ։ Էրզրումի և Բայսպէտի փաշաները հրաման ստացան գնալ Մուշի վրայ։ 1747-ին թիւրքաց 24 հազարսնոց բանակը կանգնած էր Մուշի առաջ։ Մի քանի անյաջող ընդհարումներից յետոյ, նրան վերջապէս աջողուեց յաղթել և փախստական դարձնել հզօր բէյին։ Քաղաքը ենթարկուեց մեծ տուգանքի, իսկ երկրի ոյժը թուլացնելու համար զիւղերը իրանց բոլոր պաշարներով հրդեհուեցին։ Պէտք է նկատի ունենալ որ Մուշի դաշտի ազգաբնակութեան մեծագոյն մասը բաղկացած էր հայերից։

Բայց դրանով չը վերջացաւ ամեն ինչ։ Ալայէդդինը վեց ամսից յետոյ դարձեալ իր տեղն էր և 2—3 տարուց յետոյ հարկաւոր եղաւ էրզրումից մի նոր բանակ ուղարկել նրա դէմ։ Թուրդ բէյը խոյս տուեց կուտելուց և նորից հեռացաւ, թողնելով իր անառիկ բերդում միայն 70 հոգի։ Սրանք բաւական էին օսմաննեան բանակին դիմադրելու համար և վերջ ի վերջոյ, ապարդիւն համարելով կոխը, իրանք յանձնեցին բերդը օսմանցի փաշային։ Թէ որքան ժողովրդա-

կան աշխատանք, որքան ահազին միջոցներ էին գործադրուած բերդի կառուցման վրայ, երեսում է այն փաստից, որ բերդը քանդելու համար հարկաւոր եղաւ որ 15 հազար հոգի աշխատեն 40 օր 1): Այսպէս ահա երկիրը երկու անգամ կործանուեց, մինչև որ Մուշի բէյը հանդարտուեց և բաւականացաւ իր գաւառովի: Հետևանքն էր հայ ազգաբնակութեան սաստիկ նուազումը:

Բոնութիւնները, անվերջ կրիւները հալումաշ արին և Բաղէշի խանութեան հայ ժողովուրդը: Այստեղ արդէն ուրիշ տեսակ պատերազմ էր գործում: Միշտ խառնակութիւններ տեղի ունէին խանի ժառանգների մէջ՝ իշխանութիւնը իրանց ձեռքը քցելու համար: Թեկնածուները բազմաթիւ էին. ամեն մէկը իր իրաւունքը ընդունել տալով թիւրք կաշառակեր փաշաներին, դուրս էր գալիս խանը պաշտօնանկ անելու և նրա տեղը նստելու համար: Եւ ամբողջ գաւառները ալեկոծւում էին ապրատարութիւնների, կրիւների, խոռովութիւնների մէջ: Հարկատու ժողովուրդը շունչ քաշելու հնարաւորութիւն չունէր. իշխանութեան հասնող թեկնածուն իսկոյն ահազին տուրքեր էր գնում հպատակների վրայ, որպէսզի յետ ստանայ թիւրք փաշաներին տուած իր կալուածքները: Ազգաբնակութիւնը փախաւ այդ բոնութիւններից, ջնջուեց սովի ու սրի հարուածներից: Բաղէշ քաղաքում 25,000 տներից մնաց միայն 5000, որոնցից 1500-ը հայերին էին պատկանում: Դատարկ տների մէջ բնակութիւն հաստատեցին բրդերը: Այսպէս էր և ամբողջ գաւառի դրութիւնը. հայերը կազմում էին մեծամասնութիւն, բայց նրանցից աննշան քանակութիւն միայն մնաց:

Երկիրը հայ ազգաբնակութիւնից թափուր անողակէտը գործում էր ամեն տեղ, ուր քուրդ բէյերը իրար ոչնչացնելու արհեստով էին զբաղուած: Այդ բէյե-

1) Բերդը շինել էր Մուշի ժողովուրդը բաղեցի մի հայ վարպետի ղեկավարութեամբ. իսկ նրան թնդանօթներով զինողը մի մշեցի հարտարուեստ հայ էր: Քրդերի զինագործները համարեա միայն հայերն էին:

ըի անվերջ կոփաներից էր, որ Մանազկերտի բարեբեր ու հարուստ գաւառը հասաւ վերջին դժբախտութեան։ Այդտեղ կային 360 զիւղեր, մեծ մասամբ հայկական։ 1762-ին կատաղի խոռվութիւններ սկսուեցին բէյերի մէջ և այդ քանակութիւնից մնաց միայն 100 զիւղ։ Թարի վերջերում նոր պատերազմներ Խնուսի բէյի հետ և ահա մնում են ընդամենը մի 20 զիւղ... Մանազկերտը, նշանաւոր հայկական կենտրօն հնում, ունէր 7 կամ 8 տուն հայ, որոնք ապրում էին 107 տուն քրդերի հետ։ Այսքան էր մնացել մի քաղաքեց ուր մի ժամանակ 6 հազար տուն ազգաբնակութիւն կար...

Ահա քրդական իրականութեան մի մասը։ Տեղեկութիւններ չը կան ամբողջը պատկերացնելու համար և մենք չը գիտենք թէ ինչ աւերումներ ու ջնջում է կատարել նա միւս հայաբնակ գաւառներում։ Յայտնի է միայն որ եղած քրդական իշխանութիւնների վրայ աւելանում էին նորերը։ Բայազէտը դարձաւ քրդական փաշայութիւն ժառանգական իրաւունքներով։ Վանում փաշայութիւն էր անում մի այլ քրդական ցեղ, իսկ Վասպուրականի գաւառները բաժանուած էին քուրդ բէյերի մէջ։ Դիարբէքիրի ահազին վիլայէթը համարեա ամբողջովին քրդերին էր պատկանում, որոնք ոչ մի պետական իշխանութիւն չէին ճանաչում և յաճախ պատերազմներ էին մղում նոյնիսկ վալիի գէմ, որի իշխանութեան հնազանդուում էին միայն փոքրաթիւ զիւղեր \*):

Մի ամբողջ պետութիւն Օսմանեան պետութեան մէջ։ Բայց դա հին Թիւքիսայի համար բացառիկ մի գրութիւն չէր։ Օսմանների կայսրութիւնը ներքին միապաղաղ կազմակերպութիւն չէր կարողանում ստեղծել. քրդուութիւնից դուրս էլ կային ինքնազուխ դէքէբէյներ, իսկ այս կամ այն կողմերի փաշաները յաճախ ա-

\*.) XVIII դարին վերաբերուող բոլոր փաստերը մենք վերցրել ենք Հ. Ղ. Խնձիճեանի Աշխարհագրութիւն Զորից մասնց Աշխարհի աշխատութեան Ա. հատորից (Վենետիկ, 1806)։

պըստամբական դիրք էին բռնում՝ կենտրոնական կառավարութիւնից անկախ մնալու համար։ Միայն XIX դարում կարելի եղաւ վերացնել այդ տեղական լնդնագլխութիւնները, կենտրոնացման սիստեմ մտցնել երկրի մէջ մի յայտնի չափով։ Այդ ժամանակ էլ քրդական տիրապետութիւնը կրցցրեց իր ազատութիւնները։ Բայց նախ քան այդ ժամանակին դիմելը մենք այստեղ դեռ պիտի ամբողջացնենք քրդական տիրապետութեան պատկերը։

Մինչև այստեղ մեր բերած պատմական փաստերը բաւական ապացոյց են որ հայ ժողովուրդը կարող էր միանգամայն անտանելի համարել իր դրութիւնը քրդական տիրապետութեան տակ։ Բայց մեր պատմած հանգամանքները,—պատերազմներ, աւարառութիւն, հարկահանութիւն, հարստահարութիւններ—որքան էլ յաճախ կրկնուող երևոյթներ լինեն, որքան էլ մի անվերջ շարանի պէս ընկած լինէին ժողովուրդի վրայ, չէին կարող, այնուամենայնիւ, կեանքի հանապազօրեայ յատկութիւններ լինել։ Որքան էլ խտացնենք գոյները, անկարող կը լինենք հերքելու որ այդ մասսայական դժբախտութիւնները պատահականութեան օրէնքներով էին ղեկավարում։ Ուստի մենք պիտի առանձին ուշադրութիւն դարձնենք հայ ժողովրդի իրական խաղաղ կեանքի վրայ, տեսնենք թէ նոյնիսկ նօրմալ, օրինականացած կեցութեան պայմանները որքան նպաստաւոր կամ աննպաստ էին մի հպատակ ժողովրդի համար։

Քրդական իշխանութիւնը, ինչպէս ասացինք, ամենից և ամենից շատ կալուածատիրական էր։ Երկրը իբրև ապրուստի միակ աղքիւր հպատակների համար և իբրև հարստութեան աղքիւր տիրողների համար —ահա այն առանցքը, որի շուրջը պտտում էին երկու ազգերի կենսական շահերը, նրանց կեանքի և մահուան հարցը։ Շահագործողներ և շահագործուողներ —ի՞նչ կերպարանք ունէր այս տիեզերական արիւնոտ դրաման Թիւրքաց Հայաստանում։ Ահա բոլոր հարցերի մայրը։

Ահա ինչ պիտի մենք որոնենք թիւրքահայոց հարցի հոգին, միջուկը գտնելու համար:

Տարաբախտաբար, հողային յարաբերութիւնների և և հարկային սիստեմի մասին մենք չունենք հին մանրամասն տեղեկութիւններ, որոնք վերաբերուէին բոլոր հայաբնակ գաւառներին։ Հայ գիւղացիութեան դրութիւնը փոքր ի շատէ պարզուել սկսեց հասարակութեան առաջանակ անցեալ դարի վաթսունական թուականներից, երբ կ. Պօլսում հարց դրուեց «գաւառական հարստահարութիւնների մասին»։ Այդ ժամանակից միայն լրագրութեան մէջ ամբարուել սկսեց ահազին նիւթ, բաղկացած պաշտօնական տեղեկագրերից, յայտարարութիւններից, ժողովրդական հանրագրերից, ականատես թղթակիցների նկարագրութիւններից, ճանապարհորդական դիտողութիւններից և այլն։ Ահա այդ գրականութիւնը մեղ առատ նիւթ է տալիս հաստատելու որ քուրդ կալուածատիրութեան յարաբերութիւնը դէպի հայ գիւղացիութիւնը ծորտատիրական էր։ Հայ երկրագործը քուրդ բէյի ծորտն էր այս բառի կատարեալ մտքով։ Թէս մեր ունեցած տեղեկութիւնները վերաբերում են XIX դարի կիսին, այն էլ քրդական տիրապետութեան տակ գտնուած ոչ բոլոր հայաբնակ տեղերին, բայց նըրանց մէջ նկարագրուած ճորտային դրութիւնը անկանկած մէն հին հիմնարկութիւն է, որ մնացել է գուցէ հէնց հայ նախարարների ժամանակից։ Անկարելի է ենթագրել որ մի ամբողջ ժողովրդի ստրկութիւնը իրականացած լինէր մի կարձ միջոցում, այն էլ նոր ժամանակներում։ Եւ որովհետև քրդական տիրապետութիւնը չայաստանի բոլոր կողմերում միենոյն կալուածատիրական հանգամանքներն ունէր, ուստի պէտք է ընդունել որ ճորտութիւնը յատուկ էր հայ գիւղացիութեան, բացի այն տեղերից, ուր նրա գոյութիւնը անհերքելի է, նաև քրդական հայաստանի բոլոր կողմերում։

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը 1876 թուին  
հրատարակեց «Տեղեկագիրք գաւառական հարստահարու-  
թեանց» անունով մի շատ հետաքրքրական տետրակ,  
որի մէջ հաւաքուած են տեղեկութիւններ թէ ինչ գա-  
ւառական հարցերի առիթով դիմումներ է արել պատ-  
րիարքարանը Բ. Դրան և ինչ հետևանքներ են ունեցել  
այդ դիմումները։ Հարստահարութիւնները բացառապէս  
հողային յարաբերութիւններից են ծագում։ Պատրիար-  
քարանը, ի միջի այլոց, ներկայացրել է կառավարու-  
թեան հարիւրաւոր կտոր հողերի մի ցուցակ, այն հո-  
ղերի, որ քրդերը խլել են հայ գիւղացիններից։ Ցուցա-  
կը մանրամասն է, գաւառների և աւանների բա-  
ժանուած և մի կողոպատուած ժողովրդի վերին աստի-  
ճանի ճնշող պատկերն է տալիս։ Այդտեղ, «Մօքս ա-  
ւան» վերտառութեամբ ցուցակի տակ կարգում ենք \*)  
այսպիսի մի լակօնական ծանօթութիւն։

«Սոյն աւանի քիւրդ պէյերը գիւղացի հայերն իրանց մէջ  
երբեք գերի կը վաճառեն»։

Այս պաշտօնական յայտարարութիւնը միայն զրու-  
թեան անունն է տալիս և չունի լաւատեղեակութեան  
հանգամանք։ Պատրիարքարանը, երկի, ինքն էլ տեղե-  
կութիւն չունէր թէ լսաֆիրութիւնը—այսպէս է կոչւում  
քրդական ճորտատիրութիւնը—Հայաստանի որ մասե-  
րում է տարածուած և ինչ հանգամանքներ ունի։ Պա-  
տրիարքարանից աւելի լաւատեղեակ էր յայտնի զրա-  
գէտ և Հայաստանը այնքան մանրակրկիտ ուսումնասի-  
րած Գարեգին վարդապետ Արուանձտեանը։ Իր  
«Հնոց և Նորոց» գրաբար աշխատութեան մէջ \*\*\*) նա  
խօսում է քրդական նախկին տիրապետութեան մասին  
և բացատրում է հայերի ճորտութեան սիստեմը։ Քուրդ  
էմիրները, աղաները, բէյերը, շէյխերը ոչ միայն իրանք  
էին ծառայեցնում հայ գիւղացիններին, այլև լնծայում

\*) «Տեղեկագիր» եր. 32.

\*\*) Կ. Պոլիս, 1874, եր. 155—160.

Էին նրանց, իրքեւ ապրուստի աղբիւր, իրանց զինուորակին, ծառաներին և այլ պաշտօնատարներին:

Քանզի—ասում է հեղինակը—սոքա գոլով զօրականք ըլունակալաց, համարէին զանձինս ազատ յաշխատութեանց. և բաժինք և հասք թոշակաց նոցա՝ տուեալ լինէր ըստ արժանեացն և ըստ հաճոյից մեծամեծաց նոցին երդս տամն, քսան, երեսուն, քառասուն, և ես առաւել կամ նուազ, որք պարտաւոր էին հատուցանել զամենայն պէտս նոցին և ընտանեաց նոցին տարելիս, զագանելին, զկերլին, և զոր ինչ և զորչափ և կամէինն: Ըստ այսմ բաժանեալ էին ամենայն տունք և գլուխք հպատակաց ի զօրականս զօրականս, ի զօրապետս զօրապետս, և ի պետապետս յամիրայից, յաղայից և ի շեխից բռնակալաց.

Տեարք և առողք բաժնիցս անուանէին խաֆիր. որոց հետք երկին և մնան իսկ ցայսօր ի բնակիչս Սասնոյ և Խոյթայ՝ որ ի Մուշ. և Խիզանու, Մոկաց և Շատախու և ի գիւղօրայսն Վանայ, որք զիսաֆիրութեան տուրս տան տէրանց ի Քրտաց: Գիտեմ և զվանորայս Ա. Աղբրիկ, Մատին Սոազեալ որ ի Մուշ, գուցէ իցեն և այլք, որք ցայսօր ժամանակի խաֆիրաց տուրս տան, և Օսմանեան կառավարութեան տասանորդս:

Ի շինել, ի քակել, ի մշակել, ի հնձել, ի պատրաստել, ի կերակրել, և այլ ամենայն պէտս ժառանգութեանց ծառայել ծառայէին վիճակեալքն խաֆիրաց և մեծամեծացն նոցին: Տիրողացն էին արտք, անդաստանք, անտառք, այգիք, մարգագետինք, և ամենայն երկիր: Այսպիսեաց հետք և մնացորդք են բէզք Զարսանջախին, Քեղուայ, Սասնոյ, Խիզանու, Մոզաց և Շատախու գաւառաց, որք ցաւուրս ցայսօսիկ տիրացեալ ունին սեպհականեալ ինքեանց գհողային կալուածս, որք այնքան կընծիուն յարուցին և յարուցանեն ընդդէմ արդար օրինաց Օսմանեան կառավարութեան:

... Հէրիք չէին այսքան դառնութիւնք ժողովրդեան, այլև գէպ լինէր զի հակառակէին այս Ամիրայն ընդ այլում Ամիրայի, այս Տիրող ընդ միւսում Տիրողի, և յարուցեալ ի միւսեանց վերայ, աւարէն պետ իւրաքանչիւր զիւրաքանչիւր ոայաս. և արտաքուստ եկեալ այլ ոք բռնաւոր յաղթահարել զմիոյ գաւառի բռնաւորն, առպատակէին, գերեվարս առնուին, և ի պատանդ կամ ի փոխարէն հաշտութեան մասուցանէին միմիանց զայսքան քրիստոնեայ երդս կամ իրիտասարդս և աղջկունս, մինչև տալ և հոռզս և օժիտս իրերաց զմարդիկ իրքեւ զոչսար, զէշ, զեզն:

Անսասունների դրութեան հասցրած մարդկանց

ստրկական կենցաղի մասին աւելի ընդարձակ և խիստ բնորոշ տեղեկութիւններ տալիս է Մուշի առաջնորդական տեղապահ Գրիգորիս վարդապետ Աղաւեանը հետևեալ պաշտօնական գրութեան մէջ, որ ուղարկուած է 1872 թուին Կ. Պոլսի Պատրիարքարանին.

Մերազնեայ դաս մը ժողովուրդ որ ի Բոնաշէն, ի Խութ, ի Սասունք և ի Շատախ գաւառներ, Քիւրտերու հետ խառն կը բնակին, նոցա գլխաւորներուն, որ խաֆիր կըսուին, ճորտ լինելով՝ ամենադառն կենաց վիճակուած են։ Դաս դաս նոցա բաժին եղած՝ իւրաքանչիւրն իրեւ հպատակ և սեփականութիւն համարուած, տարեկան տուրք կուտան խաֆիրներուն, և երեք կարգի բաժնուած են.

Առաջին կարգը, որ Համբայ կըսուին տան գլուխ 7 բեռ ցորեն կուտայ. 1 պաճար, 5 ոչխար, 2 լիտր իւղ, 2 լիտր ծխախոտ, 1 լիտր չորթան, 4 լիտր աղ, 1 շալուար, 1 զոյգ զանկապան, 1 զոյգ գուլպայ, 1 զոյգ խոնճան, 1 զոյգ գոգնոցի ժապաւէն, 2 ունկի վասով, 2 ունկի կոպար, 2 ունկի կանափ. 5 ունկի ձէթ, 5 հատ պուտուկ, 2 շերեփ, 30 դգալ, 4 թի, 2 կողով, 6 ցախաւել, 1 զահուկ, 4 հաւ, 2 աքաղաղ, 10 սարակ, 6 հարօր,  $12\frac{1}{2}$  դրուշ ստակ, և տարին 2 անգամ ունեցած ոչխարաց կաթ, գարնան՝ պանիր շինելու և աշնան մածուն բռնելու.

Երկրորդ կարգը՝ որ կիսահամբայ կըսուի, վերոգրեալ տրոց  $\frac{2}{3}$  մասը, իսկ երրորդը՝ որ Պճեղ կըսուի  $\frac{1}{3}$  մասն կը վճարէ.

Այն մարդակերպ գազան խաֆիրներ (ճորտատէր)՝ ինքնազլուխ և ապսուամբ վիճակի մէջ լինելով, իրենց ճորտ հայերը՝ կանամբ և որդւովք, շարժական և անշարժ կալուածներով իրարու ծախելու սովորութիւն ունին, և երբ իրարու դէմ կատաղին և թշնամանան, իւրաքանչիւրն իրենց հպատակ հայերը բռնութեամբ առջևնին ծգելով, իրարու սահման կասպատակեն, մանաւանդ թէ հայոց բնակած գիւղերու վրայ յարձակելով կը կողոպտեն, կը քանդեն, կաւրեն, կը վիրաւորեն, կը սպաննեն և կը վերադառնան տեղերնին։

Ցաղթահարեալ թշնամին՝ միւսէն վրէժը լուծելու համար զօրմաժողով կը լինի, կասպատակէ թշնամւոյն հպատակ հայերու գիւղերը, արջային զայրոյթով կը կողոպտէ, կը քանդէ, կաւերէ, կը վիրաւորէ, կը սպաննէ և կը դառնայ։

...Երբ այս աղէտները ստուգելու համար Բոնաշինու կողման այցելութիւն կընէի, տեղւոյն հայ թէյիսներ և երեք խաֆիր աղաներ ի Ս. Աղքարիկ վանք քովս գալով՝ ուրիշ խա-

Փիրներու հասուցած չարիքները պատմեցին մեզ: Եւ ուրիշ շատ մը մարդիկներէն ալ զայս ստուգելով, 1870 նոյեմբեր 10-ի և. Հայրիկ պատրիարքին և 1871 մարտ 3-ի նամակաւ ալ զաւառական յանձնաժողովին հաղորդեցի:

...Գերի տէր խաֆիրներ՝ երբ մանչ ծնանելու լինին, յանձնիւր ճորտի տունէն ոչխարով և գառամք աչք-լուսի պիտի երթան, տղայի զգխացու պիտի տանին, այն ինչ հայոց մերկանդամ կանայք՝ ձեռքով իրանց կուրծքը ծածկելու աղքատ վիճակի մէջ կը գտնուին: Երբ պատանեկութեան հասնի, զէնք պիտի պատրաստեն անոր: Կին ածելու առենը՝ ղալան (պաշլըն) պիտի տան հարսնացուի ծնողաց և հարսնանեաց պիտոյքը պիտի պատրաստին: Եթէ մեռանիլ պատահի՝ ոչխար, իւդ, պանիր և այլն տանելով կը միխթարեն զխաֆիրները:

Բայց ընդհանուր Ազգութեան նախատինք այն կէտն է, որ նահապետազն Հայոց պարկեղառութեան առաջաստի հարսներ և սրբութեան քողի ներքեւ մնած աղջիկներ՝ այսօր հոլանի եղած խաֆիրներու տան մէջ՝ իրրե հարճ օրերով ձաւարը կորոկոտը շինելու, լաթը լուսալու և կարկատելու սպահարկութիւն կընեն՝ լոին արտասուօք: Եւ անոնց կըկըլի արտերը քախնելու շաբաթներով կաշխատին մերկ անձամբ և իսկ ոտամբ, արևակէզ և փշահար եղած՝ ռզիրենց կանաչ արել կողրան, զիրենց խաւար աստղը կանիծանեն:

Թրիստոս պատարագող քահանայի սրբագործ ձեռքը մատուցած պատարագացի լուսաներէն՝ խաֆէրներու բաժին պիտի հանուի: Մանաւանդ քահանայ չգտնուած գեղերը՝ պատարագի երթացող քահանայն՝ իւր ընդունած նուէրներէն՝ իրրե սոսկ արտօնութիւն պատարագի՝ բաժին պիտի տայ անոնց:

Հայերու ոժանց կի՞ները՝ եթէ ամուլ լինին կամ մանչ զաւակ չծնանին, խաֆիրներ բռնի երկրորդ կին մը առնել կուտան, որպէսզի զաւակ յարուցաներով՝ տարեկան տուրքը տալու յաջորդեն:

Ազօրինաւոր ամուսնութեան կամ երկու կին առնելու սովորութիւնը՝ թուի թէ նախապէս այն կողմերէն մուտ գործեր է Տարօնոյ երկիրը, ուր անցեալ 8—10 տարուան միջոցին ընդհանրանալու կերպարանք մը առած է: Անցեալ աշնան միջոցին՝ մեր վիճակի կիսոյ մասին մէջ (Խլաթ, Պուլանըն և Մանազկերտ )քննութիւն ընելով, այրաթողաց, կնաթողաց և կըրկին ամուսնացելոց թիւը 70-էն աւելի գտանք, որոց ցուցակը՝ 1871 դեկտ. 21-ի նամակաւ դրկեցինք Կետրոնական Վարչութեան \*:

\*) «Մասիս» լրագիր, 1872, թիւ 1239.

Ահա ստրկութեան մի ուրիշ տեսարան, որ տալիս  
է Պօղոս վարդապետ Նաթանեան իր «Արտօսը Հայաստա-  
նի» աշխատութեան մէջ \*): Հեղինակը առաջնորդական  
պաշտօն է վարել այն տեղերում, որոնց նկարագրու-  
թիւնն է անում (Բալու և Արծակաները):

Ամեն գիւղ պէկեր և աղաներ կան բնակուած, որք չըս-  
ուած ըռնութիւն մ'ալ կը բանեցնեն իւրեանց բիւրաւոր գոր-  
ծած անօրէնութեանց հետ, և այս մինչև մեր տեղապահութեան  
օրը կը շարունակէր. այսինքն երբ գիւղացի օրիուրդ մը նշա-  
նուի ուրիշ գիւղի երիտասարդի մը հետ, պիտի միջամտեն, ե-  
թէ իրենց կամքին յարմար է՝ կաշառակիրութեամբ պսակի  
թոյլատրութիւն կընեն. իսկ եթէ ոչ՝ օրիուրդը իրենց յարմար  
ուրիշ երիտասարդի մը հետ բռնի պսակել կուտան, եթէ քա-  
հանայք չի պսակեն, իրենց մօլլայով անմիջապէս.. Կարևոր կը  
համարիմ ընթերցողաց ծանուցանել թէ ինչ որ կըսիմ առանց  
ստոյգ տեղեկութեան չէ, և ի հաւատարմութիւն բանից դար-  
ձեալ ի մէջ կը բերեմ մի օրինակ. ևս այն վերոյիշեալ բռնու-  
թեանց. Ավլաւա ըստուած գիւղի մէջ՝ հայ աղջկան մը ամու-  
սինը մեռնելով՝ այն մեռեալին եղբօրը հետ մօլլայի օրհնու-  
թեամբ պսակած են բռնաբար. և ամբողջ մէկ տարի անցած  
էր. բայց երբ մենք իմացանք այս ապօրինի ամուսնութիւնը ըստ  
օրինի Հայաստանեայց ո. Եկեղեցւոյ, ուրիշի մը հետ պսակել  
յաջողեցանք, բայց դժուարաւ, զի հիվ կարող էր դէպի այն  
գիւղ նայել՝ աղաներու և անոնց գործիք բրդաց երեսէն:

Նմանօրինակ զրութիւն և ծապաղջուր գաւառակի-  
մէջ, ուր քրդերը ապրում են խառն հայերի հետ.

Եթէ հայ մայ մը մեռնելու լինի, բոլոր ստացուածքը  
«մահլիւ» է ըսելով, կիւրացնէ պէյը, իսկ եթէ մեռնողը հայր  
կամ եղբայր ոննի, ստակ կը վճարէ պէյէին՝ «մահլիւլէն» ծա-  
խու առնելու պէս: Հայոց հարսանեաց ալ միջամտութիւն կը-  
նեն, եթէ իրենց ուղած աղջիղը՝ մանչուն և մանչը՝ աղջկան չի  
տան. իսկոյն մանչուն և աղջկան տէրերը ծանը տուգանք վճա-  
րելէն յետոյ պէյերը իրենց ուղածին տալով՝ բռնութեամբ.  
Քահանայի մը պսակել կուտան, իսկ եթէ չը պսակէ, չարա-  
չար կը գանակիոծուի \*\*):

\*.) Տպուած է Կ. Պօլսում. Այս գործի համար թիւրք կառավարութիւ-  
նը աքսորեց Նաթանեանին և նա մեռաւ աքսորավայրում:

\*\*) Եր. 54, 116—117.

Խիզան գաւառի նկարագրութեան մէջ նոյն վարդապետը պատմում է.

Քերիս պէյ իւր տունը Խուալ գիւղի մէջ շինած է, ուր տեղ չորս տուն Հայ մնացած է, միւսներն նորա բռնութիւններէն գաղթած են. Սորա իշխանութեան տակ քահանանայ չգտնուելուն՝ Կարասուցի Տ. Գրիգոր քահանան կ'թեմէ. ասի Ա. Խաչի վանահայր Մահակ վարդապետը հրամանաւ անցեալ ձմեռ հիւանդի մը հաղորդութիւն տալու համար Տարօնիս կերթայ. Պէյն քանի քիւրդ հոն դրկելով, քահանային ոտքը, ձեռքը կապած իրեն բերել կուտայ իրբեք բանտարկեալ և երբ քահանայն կը ներկայացնեն, կըսէ՝ թ' նշ իրաւամբ իմ հայերուս օրէնք կատարելու կու գաս, ինձմէ հրաման առիթ. Ողորմելի քահանան գլուխ խոնարհեցնելով ասոր սուրի առջև կը կայնի. Ինչ պատասխանելը չ' գիտէր. Երբ նա կստիպէ պատասխանել, քահանան դողդոջուն լեզուաւ կըսէ՝ հիւանդի համար կանչեցին, և ալ եկայ իմ հոգեոր պարտքս կատարելու. Առ այս կըսէ Պէյըն, պարտքիս վճարել իրբեք տուգանք 500 դահեկան և օրինաւոր երաշխաւոր մը տալ, ուրիշ անգամ չ' գալու,

Կարասուու, որոյ մէջ կը նստի Միւտիր. այս գիւղին մէջ կը ընակին Հաշամ, Հաճի Մալէհ, Մալայ, Իպրահիմ և Եռւսուփ անուն բարբարոս քիւրտեր, որք կիշխեն գիւղի հայոց վրայ. զասոնք կեղեքելէն, հարստահարելէն, կիները բռնարարելէն յետոյ, իրենց երկրագործական և տնական ծառայութեանց մէջ ևս կաշխատեն ձրի \*).

Շատախ գաւառի հայ գիւղերի մի մանրամասն տեղեկութիւնից քաղում ենք հետեւեալը.

Ցածէտ գիւղ. տիրողն Մահամուտ աղան, իւրաքանչիւր տարին կառնէ գիւղացիներէն 200 մարդ ասրակ (իրղատ), 20 չափ ցորեան, 2 լիտր իւղ, 8 լիտր պանիր, 9 այծ. Իւրաքանչիւր տունէն մէկ ոչխար կառնէ ամեն տարին. 150 ոչխար ալ ամեն գիւղացւոց ձրի պահել կուտայ:

Կազպի գիւղ. 40 տուն են հայր: Չորս են տեալք, Մահամուտ, Ալի, Հաճի, Աւտի, որք իւրաքանչիւր տարին գեղացիներէն կառնուն 100 մարդ ասրակ, 66 չափ ցորեան, 9 այծ, 4 լիտր իւղ, տուն գլուխ մէկ կթան ոչխար, ձմեռ չորս ձի և ոչխարներ պահել կուտան, և որքան չօրապ (գուլպա) և տրեխ ուղին կառնուն:

Մագ գիւղ. 4 տուն հայք են, տեալք են Հասան և Հիւսէն

\*) Ել. 177—178.

աղայք. կառնուն 50 չափ ցորեան, 50 հազար հատ ընկոյզ: Որքան ուզեն կուտեն և կը խմեն քրտեր այս հայոցմէն, տէ-րութեան միւլթեգիմներն ալ վայրի ծառոց պտուղներուն ան-գամ տուրք կառնուն:

Տառպար գիւղն 4 տուն հայք, երկու եկեղեցի. տեարք են Եւսուփ և Օսման աղայք, 100 տուն էին քանի մը տարի առաջ սոյն գիւղի հայք, անտանելի բանութենէն և հարստահարութենէն փախած են ամենք: Անսկարագրելի է այս գիւղի հայոց խեղճութիւնը, իրենց կեանք, վաստակք և հողեր յիշեալ աղաներու ձեռ-քն է, որի սուրբ եկեղեցիք խոտ կը դնեն և նոյն սուրբ տա-ճարաց մէջ հարկաւոր կընեն...

Մարցիղ գիւղ. 4 տուն հայ. 1 եկեղեցի Սուրբ Շմաւօն, տէրն է Մահմուտ աղան, յառաջ բազմահայ էր գիւղս, սուրբ եկեղեցւոյ բեմը Մահմուտ աղան շիներ է իւր հարկաւոր... Զկարծեմ որ երկրիս վրայ այդպիսի խղճալի ժողովուրդ կայ, զօր ինչ առնէ Մահմատ աղան, ոչ ոք է որ իշխէ կառավարութեան բողոքել: Թէկ տէրութեան հարկն ժողովն և առնուն, բայց տէրութեան կանոն անդ մուտ չէ գործեալ երբէք. հայոց ազգ տեսանի աստ մերկ, քաղցած, պարտիւք լցեալ և ըստ ամենայնի ողորմելի \*):

Վերջապէս մի օրինակ էլ բերենք Տիգրանակերտի կամ Դիարբէքիրի նահանգից.

Մի ի Հայաստանի գաւառաց, որոյ անունը Խուլի գա-ւոք կը կոչուի, յուրում կը պարունակուին երկատասան քրիս-տոնեայ գիւղօրայք....: Ի հին աւուրց բուաւոր ոմն Թելո ա-նունով այլազգ ինքն և իւր եղբարք և եղբաց տղայքն ի վա-զուց անտի հարստահարեր են և տակաւին կը հարստա-հարեն, կը նեղեն, կը զրկեն բոնաբար յիշեալ գաւառի աղքա-տիկ խեղճ և անտէրունջ ժողովուրդք: Յիրաւի այն խղճալի ժողովրդոց ուստիստն ալ կորեակ և գերմակ կը կը հն, որոնցմէ մեծագոյն մասը կարօտ են կորեկի կլկի, նաևս կը համարձա-կիմք ասել՝ աւուր պարենի: Ականատեսի և ուկնալուրք ասոնց ողբալի վիճակին վայ վայ կը կարդան, երանի այնոցիկ որք չեն տեսած և չեն լսած ասոնց թշուառագոյն վիճակն: Ասոնց բնակուած տեղուանքն ալ բոլորովին ապառաժ և քարուտ Հա-յաստանի բարձրաբերձ լերանց ձորերու մէջ կը գտնուին. անցնող դարձող ճանապարհորդք կը հիանան, կապչին ատոնց թշուառ կեցութեան վերայ, իվերայ այսր ամենայնի, տարին

\*) «Մասիս», 1872, թ. 1812.

մի անգամ չեմք ըսեր ամեն ժամանակ, աշուն է աշուն յիշեալ բռնաւոր և հարստահարիչ թէլօն տասն քսան մարդով կելէ կը պտտէ այդ քրիստոնեայ գիւղօրէից մէջ, և Տէրութեան հարկէն ի բաց գիւղի գլուխ քսան լիար իւղ, քսան ոչխար, ու որ կիշկանի մէկ մէկ ոչխար ալ իրեն և իր մարդկանց ուտելու համար կը զենէ. քսան աման սեր, քսան զոյդ գուլպայ, քսան զոյդ կարախ, երեսուն չուան, վեց լուծքի լուծ, ութ շերեփ (այսինքն չամչա), վաթսուն թիակ, տասն և հինգ հաւ, քառասուն չարոխի թել, չորս թեռ, վեց թաղիք, ութ հոխայ բուրդ, քադասուն կապ իր տաւարի կապելու, տասն շարիթ, տասն և հինգ շալվար և այլն և այլն թուով այսքան բան բըռնութեամբ սոյն խղճալի ժողովրդներէն առնելէն տանելէն զկնի, հարիւր մարդ ալ ձրիաբար կը տանէ իրեն համար կաշխատեցունէ: Այդ ժողովրդոց արինը բրոլորովին ծծած է և կը ծծէ իր ծակ և անյագ որկորն լեցնելու. մացեր է ատոնց չոր և ցամաք ոսկորները, զանոնք ալ փշրելու վրայ է \*):

Ահա թիւրքահայերի հարցի ամբողջ հիմքը, ամբողջ բովանդակութիւնի: Մի առանձնայատկութիւնն է սա, արդինք դարաւոր զարհուրելի իրականութեան, որ այսօր էլ դեռ մնում է իր ամբողջ աղէտալի կերպարանքով: Բայց կարել՞ է որ փոքր ի շատէ բարեկարդ մի պետութեան մէջ գոյութիւն ունենայ մարդկային այսպիսի ստրկութիւն: Այստեղ ահա քրդական հարցը հիւսւում է աւելի բարդ, աւելի ահաւոր մի հարցի հետ: Դա Արևելեան հարցն է կամ, ուրիշ խօսքով, Օսմանեան պետութեան բարեկարգութեան հարցը:

Քրդական իրականութիւնը — դա առաջին սախն է, դրած հայ ժողովրդի կրծքի վրայ: Թիւրքական ըէժիմը իր ամբողջ ծանրութեամբ ընկած է այդ սալի վրայ: Քանի որ կայ այդ ըէժիմը, քրդական քարը պիտի ճնշէ հայութեան սիրտը: Այդ կարծ դէն զցելու համար հարկաւոր է նրան պահպանող, նրա նեցուկ ոյժը — օսմանեան ըէժիմը, այդ դարաւոր անէծքը — խախտուի իր հիմքերից:

Այս է պատճառը որ հայկական հարցի մէջ անսմի-

\* ) «Մասիս», 1873, թ. 1364.

շական դժբախտութիւնը —քրդական հարցը —երկրորդական տեղ է բռնում, թագնուած լինելով օսմանեան բռնապետութեան մէջքի ետևում...

III

«ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ»

Նա, այդ մարդը, մի ժամանակ սարսափ էր տարածում ամբողջ Եւրոպայի վրայ, իբրև թարմ, կոռուպրարմի երիտասարդ, որի յաղթական զօրքերը ծեծւում էին Լեհաստանում և բանակ էին դնում Վիեննայի դռների առաջ: Յաղթութիւններով յղփացած, հրամայող և տէր Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկայի հողերի վրայ, նա լըցուել էր ամբարտաւան արհամարհանքով դէպի քրիստոնեայ պետութիւնները, որոնք ատամ էին կրծտացնում նրան տապալելու համար, բայց միայն իրանց անկարողութիւնն էին ցոյց տալիս, իսկ հոչակուած, ամենաքրիստոնեայ Ֆրանսիան խնդրում էր նրա դաշնակցութիւնը՝ առևտրական և քաղաքական նպատակներով:

Երկու դար միայն տեսեց այդ փառքը: Օսմանեան աստղը սկսեց մարել, նուանող երիտասարդը հիւանդ էր և այդ հիւանդութիւնը բուժելու ոչ մի հնար չէր գլուխնում:

Այդ հարուածը իջաւ Օսմանեան գրօշի վրայ այն ժամանակից, երբ բոլորովին պարզուեց, որ շրջապատող աշխարհը անդադար առաջադիմում է, իսկ նա կանդ է առել, արագ յետ է մնում առաջադիմողներից, լինեն նրանք հպատակ ուայեաներ թէ հարևան անկախ պետութիւններ:

Ճահճացման հիւանդութիւն: Մենք կը նկարագրենք այդ հիւանդութիւնը, նետելով մի Եւրոպացի պատմաբանի \*) մանրամասն տեղեկագրին:

\*) Գերվինուս, «Պատմութիւն XIX դարի», հատոր հինգերորդ, «Ապատամբութիւն և վերածնութիւն Յունատանի», ներածութիւն:

Ծայրայեղ անշարժութիւնից Թիւրքիան դարձել էր բարբարոս պետական անկարգութեան մի անճոռնի պատկեր, որին անողոք ճակատագրի տնօրինութեամբ վիճակուած էր ապրել եւրոպական հասարակութեան մէջ: Ի՞նչ էր այդ պետութիւնը սկզբում: Նուաճողինքնակալութեան վրայ հիմնուած մի զինուորական բռնակալութիւն, որ երբէք չը կարողացաւ փոփոխել իր էութիւնը, նոր հիմքեր մշակել իր գոյութիւնը շարունակելու համար: Մի ժամանակ այդ բռնակալութեան բարոյական ոյժը կրօնքն էր, իսկ քաղաքական ոյժը—նրա ազգային զօրքը: Բայց ժամանակը փորփորեց այդ երկու խարիսխները. կրօնքը կորցրեց իր նախկին իշխանութիւնը մըտքերի վրայ, իսկ զինուորութիւնը, տիրահոչակ ենիչերիութիւնը, ընդունեց մի զարհուրելի այլանդակ կերպարանք: Մի ժամանակ ենիչէրին պետութեան սահմանները ընդարձակող էր, բայց յետոյ դարձաւ այդ իսկ պետութեան ամենավտանգաւոր թշնամին, որովհետև դրսում նա վախկոտ էր, իսկ ներսում, տանը, քաջ աւագակ, որի ձեռքին խաղալիք էին դարձրել նոյնիսկ սուլթանները: Զինուորական բռնապետութեան ահարկու ոյժն ու համբաւը վերջացաւ այն օրից, երբ այդ սուլթանները թողին ռազմական կեանքը, երբ փոխանակ զօրքերը դէպի պատերազմ առաջնորդելու, մտան հարեմական վաւաշու ու մեղկ անկիւնները...

Թիւրքական բռնապետութիւնը չը կարողացաւ ոչինչ բան կընդօրինակել եւրոպական միապետութեան լաւ կողմերից: Այն ամենը, ինչ ուրիշ երկրներում հաստատում էր պետութիւնը ապահովելու համար, այսինքն անձի և գոյքի ապահովութիւն, ազատութիւն, պատիւ, լուսաւորութիւն,—այստեղ, Թիւրքիայում, ճնշուած ու բոլորովին արմատախիլ արուած էր առանձին կերպով մահմեղական և առանձին կերպով էլ քրիստոնեայ հպատակների համար: Նոյն իսկ սուլթանները, որոնք կը ըստ են «Ալլահի ստուերը երկրի վրայ» տիտղոսը, թէ իրանց ընտանիքում և թէ անձնապէս ազատ չէին ֆա-

Նատիկոսական սովորութիւնների և կանոնների բարբարոսութիւնից:

Սուլթանական գահից էլ սկսուեց վարչական քայլայումը: Պաշտօնեան, նոյնիսկ ամենաբարձրը, իր կոչման պարտաւորութեան չը պիտի ծառայէր, այլ գահի վրայ նստածի քմահաճոյքներին, պիտի յարմարուէր նրա տրամադրութեան: Այս հասկացողութիւնը մի ամբողջ միստեմ ստեղծեց. պետութիւնը կառավարող բարձր պաշտօնեանների մէջ բոյն դրեցին մեքենայութիւնները, խորիզները: Բարձր, պատասխանատու պաշտօն վարելը ունէր շատ վտանգներ. այսօրուայ ամենանզօր մեծ վեզիրը սուլթանի մի հրամանով կամ ենիչէրիների պահանջով կարող էր վաղը ամենադժբախտ մարդը դառնալ: Աւելի վտանգաւոր էր մեծ հարստութիւն ունենալը: Սուլթանները առանց որևէ պատճառի յարքունիս էին գրաւում հպատակների ամբողջ հարստութիւնը, յաճախ սպանել տալով տէրերին: Այսպէս էր մայրաքաղաքում, իսկ գաւառներում նոյն սուլթանական կամայականութիւնը գործադրում էին կառավարիչները: Առանց կաշառքի ոչ մի պաշտօն չէր կարելի ստանալ: Եւ պաշտօններ ծախելը իրանք՝ սուլթանները մտցրին: Այստեղից առաջացաւ բախչիշը, այն սարսափելի խոցը, որ մինչև այսօր էլ ուտում է օսմաննեան պետական կաղմը, ոչնչացնելով ամեն մի արդարութիւն, պարտաճանաչութեան սկզբունք և հաստատելով բացարձակ կամայականութիւնների, կեղեքումների սիստեմը:

Գիտական այսպիսի մի կազմակերպութիւն, իհարկէ, չէր կարող զարկ տալ երկրի տնտեսական առաջադիմութեան: Միայն առևտուըը, այն էլ շնորհիւ զանազան արտօնութիւնների, որ խլում էին եւրօպացիները թիւրքիայից, զարդանում էր հնար եղածին չափ: Մնացած արդիւնաբերութիւնները, չունենալով ոչ մի պաշտպանութիւն, ենթարկուած էին կողոպտումների և գտնւում էին դժբախտ դրութեան մէջ: Այդ զարմանալի պտղաբեր երկրում ամենալաւ հողերի գուցէ <sup>9/10</sup> մասը ընկած

էր անմշակ. երկրագնդի այդ ամենագեղեցիկ մասը անապատ էր դարձել և այստեղ, ուր խիտ ազգաբնակութիւնը կարող էր լիառատ կեանք վարել, երբեմն սովոր էր մատնւում: Հեռաւոր ընդարձակ երկիրները սարսափելի աւերանգի պատկեր էին ներկայացնում, իսկ մայրագաղթը, կենտրօնը—փարթամութեան և մուրացկանութեան մի վայրենի խաւնուրդ:

Խնճախորակման անէծքն էր ընկած այդ պետական սիստեմի վրայ: Բարոյական և մտաւոր կրթութեան բարձր նըսպատակների մասին վաղուց էր որ ոչ ոք չէր էլ մտածում: Ներդաշնակ երաժշտութեան մի հատ ձայն էլ չէր հնչում, որ կը լինէր նշան թէ սկսում է ժողովրդական կոպտութեան մեղմացում և որ կարող կը լինէր լոեցնել ենիչէրական երաժշտութեան վայրենի ճռճոցներն ու ճչոցները: Մեռաւ ամեն մի հոգմոր կեանք, եթէ հաշուփ չառնենք կրծնական ֆանատիկութեան վաղանցուկ բռնկումները: Ոչ ամուսնութիւնը, ոչ ընտանիքը, ոչ դպրոցը, ոչ եկեկեցին, ոչինչ չէր նպաստում մարդու անասնականութեան զապման և նրա մէջ իր մասին բարձը հասկացողութիւններ կազմելուն: Հունենալով միակնութիւն, այդ օրդուն, որի մէջ սեռական գրգռումը, երկու սեռերի կողմից էլ, անսանձ էր և միենոյն ժամանակ աղճատուած, զրկուած էր այն հաստատութիւնից, որ ամեն բանից շատ է նպաստում մարդու մէջ անասնական հակումների տկարանացընելուն: Ամբողջ կեանքը ընդարձացաւ մեքենական—անշարժ ծիսականութեան մէջ: Մարդիկ, որոնք աւելի լաւ էին ճանաչում այդ ժողովուրդը և աւելի զիջողաբար էին խօսում նրա մասին, գտնում էին որ նա տգէտ, ծոյլ, ֆանատիկոս է իր ստորին խաւերում, իսկ բարձրերում—ազնիւ գործնական յարաբերութիւնների մէջ, յաճախ վեհանձն՝ նեղուածների վերաբերմամբ, բայց բթացած վաւաշուտութիւնից, անշարժ ու անմիտ նստած՝ չիրուխը ձեռքին, մի մռայլ տիրութեամբ, որ մեծ մտսամբ անցեալ անառակ կեանքի հետևանքն էր \*):

Հասկանալի է որ այդ անտարբեր, բթացած խաւերը մի տեսակ անխուսափելի ահեղ ճակատագիր էին համարում իրանց անկումը: Եւ այդ հաւատը աւելի ևս սարսափելի էր դարձնում անշարժութիւնը, որ թոյլ չէր տալիս թէ մարզը կարող է կատարելագործել ինքն ի-

\*) Գերվինում, ուստի թարգ. եր. 7—8:

րան։ Այդ առաջաւորների մեծամասնութիւնը յօժարութեամբ ընդունում էր որ բարենորագումը, օրէնսդրական փոփոխութիւնները լաւ են սւրիշների համար, բայց ոչ թէ իրանց, թիւքքերի համար, որովհետև Մուհամէդի գրուածքների մէջ կայ ամեն ինչ, այնտեղ ոչ չինչ չէ մոռացուած։

Նրանք կոյր էին իրանց անկման և ֆրանկների բարձրացման պատճառների վերաբերմամբ։ Թոյլ չը տալով որ ներս մտնէ և մի հատ օտար բարելաւութիւն, և այդ էլ այնպիսի մի ժամանակ, որ հօկայական քայլերով առաջ է գնում, նրանք շուտով պիտի կախուած մնային ամեն մի առաջացող հարեւանից, պիտի վասնգաւոր դրութեան մէջ ընկնէին իրանց նուաճած ամեն մի ազգի վերաբերմամբ, որ ժամանակի շարժման աւելի արագ էին հետեւում։

Այսպէս էր տիրող ազգաբնակութիւնը։ Ամենաամօթալի, ամենավիրաւորական պայմաններով նրան ենթարկուած էր ոչ-իսլամ ազգաբնակութիւնը, որ բաղկացած էր բազմաթիւ ազգերից ու լեզուներից, բայց ունէր մի ընդհանուր իրական անուն—ուայեա (հօտ, նախիր)։ Այդ այլակրօններին ճնշելը, հարստահերելը արդէն մի իրաւունք էր, որ բղխում էր կրօնից և նուիրագործուած էր իսլամի տիրապետութեան առաջին դարից։ Արդէն միայն գլխահարկը որ սահմանել էր մարդարէն յատկապէս այն նուաճուող ժողովուրդների համար, որոնք չեն ընդունում իսլամը, պէտք է միշտ յիշեցնէր ուայեային թէ դա նրա կեանքի փրկանքն է, թէ առանց դրան նա իրաւունք չունի արեգակի տակ ապրելու։ Իսլամի առաջին հիմնադիրներից մէկը, Օմար խալիֆը, աւելի ևս ստորացրեց ոչ-իսլամներին։ Նրա հրատարակած օրէնքը արգելում էր ոչ-իսլամներին ե-կեղեցի շինել կամ վերանորոգել, բացարձակ կերպով պաշտել իրանց կրօնը, սովորել արաբական գրական լեզուն, կրել զէնք և թամբած ձի նստել. իր հագուստի ձևով և գոյնով ուայեան պիտի տարբերուէր ուղղահաւատներից։

Ճիշտ է, ժամանակի լինթացքում գործնական կեանքը

մեղմացրեց Օմարի կանոնները, բայց նրանց մեծ մասը՝  
այնուամենայնիւ, մնաց Թիւրքիայում։ Սուլթան Սուլէյ-  
ման Լ-ի ռկանունի-ռայեաւ օրէնսդրութիւնը հարկերի  
մի ահազին բեռ էր գնում ռայեանների վրայ։ XVII դա-  
րում մեծ վեզիր Քէփրիկա Մուստաֆան վերացրեց այդ  
հարկերը, թողնելով միայն գլխահարկը \*), բայց Թիւր-  
քիայում բարեկարգող, կամայականութիւն սահմանափա-  
կող օրէնքներ միայն գրւում են և ոչ գործադրւում։  
Բացի դրանից, նոյն Մուստաֆան, հրամաններ արձա-  
կելով որ քրիստոնեանների հետ լաւ վարուեն, հարկա-  
դրուած էր զիջումներ անել և մահմեդական ամբոխին,  
աւելի ևս սաստկացնելով հագուստի տարբերութեան  
ստորացուցիչ օրէնքները։

Թիւրքիայի բարեկամները յաճախ փաստաբանում  
էին թէ քրիստոնեան քրիստոնեայի դէմ կրօնական ա-  
ւելի խիստ հալածանք է յարուցանում, քան թիւրքը  
քրիստոնեայի դէմ։ Սա, տարաբախտաբար, ճիշտ է.  
յոյները, սերբերը շատ անդամ են նախապատիւ համա-  
րել մնալ մահմեդական Թիւրքիայի իշխանութեան տակ,  
քան ենթարկուել լատինական կաթոլիկութեան։ Բայց  
սա միայն կրօնական անհամբերողութեան աստիճաննե-  
րըն է ցոյց տալիս և ոչ թէ այն թէ Թիւրքիան քրիս-  
տոնեանների համար աւետեաց երկիր էր։ Գրուած օ-  
րէնքները, ընդունուած սկզբունքները այնտեղ հիմնա-  
ւոր մոռացութեան են մատնում նոյնիսկ այժմ, երբ  
եւրօպական պետութիւնների միջամտութիւն կայ, իսկ  
ինչ կը լինէր այն ժամանակները, երբ գոյութիւն չու-  
նէր միջամտութիւն և թագաւորում էին հին կարգերը։  
Կենարոնում գրւում էր օրէնք հարկերի չափաւորու-  
թեան մասին, բայց կենարոնից հեռու այդ օրէնքը չէր  
խօսում; այլ կառավարիչների քմահաճոյքը։ Ռայեան  
անչափ ու անսահման բեռնաւորուած մի անասուն էր.  
և նա, վերջապէս, յուսահատութիւնից հասնում էր կա-

\* ) Այժագովսկի—ԵՊատմ. Օսման, Ա հատ. եր. 74.

տաղութեան, դառնում էր գիշատիչ գազան։ Ու թողւելով իր դաշտն ու տնտեսութիւնը, գնում էր աւազակային խմբեր կազմելու, լցուած անզուսպ վրէժովթիւրքական ըէժիմի դէմ։ Այդպէս էր նա արտայայտում էր բողոքը։ Սակայն այդ անձնազոհութիւնը ազգաբնակութեան մի մասին կարող էր մատչելի լինել։ Աւելի շատ էին այնպիսի խաւերը, որոնք կոփւ և արիւն չընդունելով, յարմարում էին տիրողներին ստրկութեամբ։ Կրօնափոխութիւնը, իբրև հետևանք այդ կեղեքումների, հսկայական չափեր էր ընդունում, այնպէս որ XVII դարի վերջը և XVIII-ի սկիզբը մի ժամանակամիջոց էր, երբ թւում էր թէ քրիստոնէութեան, Թիւրքիայի բոլոր մասերում, սպառնում է վերջնական և անհետ կորուստ։

Այս է ահա այն նեխուած ու փտած կազմակերպութիւնը, որ ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան աչքում վայրենի անկարգութեան համանիշ է և ստացել է Շհիւանդ մարդ» յատուկ անունը։ Այդ անյոյս հիւանդի ձեռքի տակ պիտի ապրէին բազմաթիւ կենսունակ ազգեր։ Կարելի՞ բան էր։

XVIII դարում սաստկացան գերի ազգերի ջանքերը։ Յոյները վաղուց էին ազգային նուիրական հասկացողութիւն դարձրել թիւրքական լուծից ազատուելը։ Ազատութիւնը, իհարկէ, զէնքի միջոցով կարելի էր ձեռք բերել, եւ կլէֆտները, բարբարոսութեան դէմ կոռուող այդ ժողովրդական հրոսակախմբերը, կազմում էին այն կորիզը, որից մի ժամանակ պիտի բանէր ժողովրդական, լաւ կազմակերպուած ապստամբութեան մեծ ծառը։ Նոյն նախապատրաստական շրջանն ունեցաւ ազատազրական գործը և Բալկանեան թերակղզու գերի սլաւօն ազգերի մէջ։ XVIII դարում թիւրքերի դէմ մանր լեռնային պատերազմներ էին մղում սերբիական, բոլգարական, չէրնօքօրիական և այլ տեղերի հայկուկները։ Այդտեղ էլ հետզհետէ կազմում էին յեղա-

փոխական աւանդութիւններ, ոտզմիկ տարրեր, լցուած օսմանեան շղթաները ջարդելու կրակոտ տեխչով:

«Հիւանդ մարդու» հիմքերը սասանւում էին ամեն կողմից: Որքան ակնյայտ էր դառնում նրա անբուժելի հիւանդութիւնը, այնքան ոյժ և մեծ թափ էին ստանում հեծող ժողովուրդների ազատական շարժումները: Ահաւոր պայքարները փոքրիկ ազգերի և վիթխարի, բայց հիւանդ բռնապետութեան մէջ վերջնական լուծում ստացան XIX դարում, երբ նախ սերբերը, ապա յոյները, բումինացիները, չէրնօգօրիացիները, Հերցեգովինայի և Բօսնիայի քրիստոնեաները և բոլգարները անդամահատութիւններ կատարեցին «Հիւանդ մարդու» վրայ և զանազան ձևերով ազատութիւն գտան:

Եւ այսպէս, ազատութեան գործը հնարաւոր էր միայն մի միջոցով—ապստամբութիւնների, արիւնհեղութեան միջոցով: Ուրիշ ոչինչ միցց պատմութեան մէջ չէ յայտնուել իրու արևելեան քրիստոնեաների հարցի իրական և արմատական լուծում: Բայց գերի ազգերի ապստամբութիւնները կարող էին իրանք իրանց, լոկ սեփական ոյժով, յաղթահարող հանդիսանալ, քաղաքական հարցեր լուծել: Այստեղ է ահա պատմական երևոյթի կարևորագոյն մասը:

Որ տանչուած ազգերը կարող էին հերոսութեան հրաշքներ ցոյց տալ իրանց համար մի լաւ ապագայ ստեղծելու համար,—այդ միանգամայն բնական է, միանգամայն հնարաւոր: Բայց ոյժերի անհամաչափութիւնը, ինչպէս յայտնի է, գերակշռում է հերոսական անձնուրացութեան բոլոր հրաշալիքները: Թիւքիան ահազին բանակներով, իր ռազմական պատրաստութիւններով սովորաբար հեշտ էր ճնշում փոքրիկ ազգութիւնների ապստամբական բռնկումները: Եւ ազատութեան համար կռուողները միայն իրանց հրաշալի, բայց անպըտուղ նահատակութիւններով լցրած կը լինէին աշխարհը, եթէ օտար միջամտութիւնը չը գար նրանց

ոյժ տալու, նրանց դատը ոյժի ահաւոր ճնշմամբ շարունակելու:

Ուրեմն, ազատութիւնը աջողեցնում էր միայն այն ապստամբութիւնը, ու գրաւում էր մի որևէ ուժեղ պետութեան համականքն ու գործնական աջակցութիւնը: Թիւրքական լուծի գէմ բռնկուած բոլոր ազատական բռնկումների թագն ու պսակը յունական ապրատամբութիւնն է XIX դարի քսանական թուականներին, մի ապստամբութիւն, որ ճշմարտապէս փառահեղ էր իր տաղանդաւուր հերոսների բազմութեամբ, իր աջող պատերազմական գործողութիւններով, որոնք յուսահատութիւն էին պատճառում թիւրք կառավարութեան: Սակայն որքան էլ անընկճելի լինէին յոյն հայրենասէրները, որքան էլ նրանց մղած կոհիները յիշեցնէին հին գիւցազնական ժամանակները, յունական հարցը վճռելու համար հարկաւոր եղաւ Նավարինի ճակատամարտը ուր եւրօպական միացած նաւատորմները ոչնչացրին օսմանեան նաւերը, իսկ դրանից յետոյ էլ սկսուեց ոռութիւրքական պատերազմը, որ վերջացաւ Աղրիանապօլսում կնքուած դաշնագրութեամբ: Միւս ազգերի ապրատամբական շարժումներն էլ վճռական ու յաղթող էին միայն այն ժամանակ, երբ կոթնում էին օտար միջամտութեան:

Փրկարար միջամտութիւն. բայց նա պատրաստ կանգնած չէր հրապարակում, սպասելով թէ որտեղ է ազատութիւնը հրդեհ առաջացնում, որպէսզի առանց տատանումների, առանց շահախնդրութեան, լոկ գաղափարին ծառայեցնելով: Նետուի իր ամրող ոյժով հիւնդ մարդու մի անդամն էլ կտրելու համար: 1828—1829 թուականների պատերտզմի ժամանակ ոռուսաց զօրքերը գրաւեցին Բօլգարիան, բայց ոչ միայն բօլգարական հարց չը յարուցուեց այդ միջոցին, այլև ոռւս իշխանաւորները պարտք էին համարում վիրաւորել հեռացնել իրանց ժողովրդի ազատութեան մասին: մտածող բօլգար հայրենասէրներին, թէև միաժամանակ ամեն

կերպ իրախուսում և պաշտպանում էին բօլգարների ցեղակից սերբերի աղատական շարժումները։ Նշանակում է որ այն ժամանակ ռուսների հաշուի մէջ չէր մտնում բօլգարական ազատութիւնը։ Բայց 1877-ին նոյն այդ ազատութեան համար ռուսները մի ամբողջ արիւնահեղ պատերազմ սկսեցին։

Միջամտութիւնը, ուրեմն, պէտք էր ստեղծել, առաջ քաշել։ Բայց ի՞նչպէս։

Մենք այստեղ չենք շօշափի թիւրքահպատակքրիստոնեաների պաշտպանութեան հետ կապուած քաղաքական-տնտեսական շահերը, որոնք միջամտող պետութիւնների համար գլխաւոր շարժառիթներ էին։ Պատմական երկոյթի պատկերը գծագրելու համար կասենք որ միջամտութիւնը կրօնակցութեան կամ, աւելի ճիշտ ասած, դաւանակցութեան թելադրութեամբ էր կատարւում։ Եթէ թիւրքական լուծից ազատուած քրիստոնեաներին բաժանենք դաւանութիւններով, կը տեսնենք երկու եկեղեցի—օրթոդօքս և կաթոլիկ։ Օրթոդօքսութեան պաշտպանի դերով միջամտութիւն գործողը Ռուսաստանն էր, կոթողիկութեան—Ֆրանսիան (Լիբանանի հարցում)։ Այստեղ մենք նկատի ունենք ներգործական միջամտութիւնը, զէնքով-զրահով զինուած հարկադրանքը։ Դիվլումատիական անարիւն միջամտութիւններին մասնակցել են բոլոր պետութիւնները, բայց այդ միջամտութիւնները համարեա միշտ ապարդիւն են անցել։

Միայն յունական ազատութիւնն է բացառութիւն կազմում։ Բողոքական Անգլիան այդ ազատութեան համար պակաս չէ աշխատել, քան օրթոդօքս Ռուսաստանը։ Սա միակ դէպքն է, երբ Եւրոպան աչքի առջև ունէր մի կուլտուրական առաքելութիւն։ Ազատում էին ոչ թէ քրիստոնեայ Յունաստանը, այլ հին, հանրապետական Աթէնքի Ելլադան, համաշխարհային հանճարների գերի ու աւերակ հայրենիքը։ Յոյները իրանց առաջադիմական շարժումներով զրաւել էին քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը, կլէֆտական հերոս իմբերից։

աւելի այդ մտաւոր շարժումն էր, որ ջերմ հեղենասիրութիւն տարածեց Եւրօպայում։ Բայրօնը, յունական ազատագրութեան զինուոր գրուելով, տեսնում էր իր առջև հին Հոմերոսների, Ֆիդիաների, Սոկրատների ճառագայթն։

Այս բացառութիւնից դուրս բոլոր միւս ազատարար միջամտութիւնները ունեին նեղ կրօնակցական հանգամանք։ Այժմեան Ռումինիան, որ մի ժամանակ Մոլդավո-Վալաքիա էր կոչում, իր լեզուով ու ծագումով պատօն ցեղին չէր պատկանում, որպէսզի մտնէր համալաւօնական գաղափարի պաշտպանութեան տակ։ Բայց դրա փոխարէն նա ունէր մի ուրիշ խարիսխ։ Իր ազատական շարժումների մէջ վայելում էր Ռուսաստանի գործնական համակրանքն ու աջակցութիւնը, որովհետեւ օրթօդոքս յունադաւանութեան էր պատկանում։

Մի ուրիշ օրինակ։ Եթէ մարօնիտ փոքրիկ ժողովրդի տանջանքները վերջացնելու համար Սիրիայի ափնիջան ֆրանսիական զօրքեր և մնացին այնտեղ մինչև որ Լիբանանը ստացաւ տեղական ինքնավարութիւն, պատճառն այն էր որ մարօնիտները դաւանութեամբ կաթոլիկ էին, իսկ Ֆրանսիան կաթոլիկութեան պաշտպանն էր Արևելում և Նապոլէօնը, նոյնիսկ հակառակ Յնդիայի դժգոհութեան և դիմադրութեան, զօրքեր մտցրեց Թիւրքիայի սահմանները, որովհետեւ Թիւրքիայում մեծ պետութիւնների արշաւողական քաղաքականութեան լաւագոյն առաջնորդը կրօնակցութիւնն է, ինչպէս շատ փորձերով ցոյց էր տուել Ռուսաստանը։ Այդ դաւանակցական պաշտպանութիւնը այնքան ակներև էր նոյնիսկ հասարակ ժողովրդի համար, որ Զէյթունի հայերը, 1862-ի իրանց ապստամբութիւնից յետոյ, կամենում էին կաթոլիկութիւն ընդունել և այգախառվ արժանանալ նոյն Նապոլէօնի բարի ուշադրութեան։

IV

ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱԿԻՑՆԵՐԻ

Հայերը, ապրելով համանման պատմական հանգամանքների մէջ, լինելով միևնոյն անողորմ ճակատազրից հալածուող մի քրիստոնեայ ազգութիւն, չէին կարող անդիտակ մնալ այն միջոցներին, որոնք միայն կարող էին ճանապարհ բաց անել մահմեղական դժոխքից դուրս գալու համար։ Եւ մենք աեսնում ենք հայերին առաջին փորձեր անող ազգութիւնների շարքում։

Իսրայէլ Օրիի շարժումը XVII դարի վերջում ունէր նոյն կերպարանքը—ապստամբութիւն և օտար մի պետութեան միջամտութիւն։ Բայց առաջին և եթ քայլից մի մեծ խոչնդուտ էր կանգնում այդ ուղիղ ճանապարհին—չը կար դաւանակից պետութիւն։ Այդ էր գլխաւոր պատճառը, որ երեսլի հայ հայրենասէրը աշխատում էր որ հայ եկեղեցականները ճանաչեն Հոռմի պապի գերիշխանութիւնը, այսինքն միանան կաթոլիկութեան։ Բայց այդ ջանքերը ինչպէս յայտնի է, աջողութիւն չունեցան։ Եւ Օրին, իհարկէ, առաջինը չէր այդ տեսակ գործունէութեան մէջ։ Նրանից առաջ էլ, նրանից յետոյ էլ, նոյն իսկ մինչև մեր օրերը, կաթոլիկութեան պրօպագանդը Հայաստանում յենուած էր ոչ այնքան երկնային բարիքների վրայ, որքան քաղաքական խոստումների վրայ։ Արքայութիւն մտնելու հարցը այնքան մեծ և համոզիչ պատճառ չէր որ հայերը թողնէին իրանց նախնիքների եկեղեցին ու գրուէին ս. Պետրոսի փարախի անդամներ։ Ուստի նրանց բացարձակ կերպով ասում էին որ ս. Պետրոսը ոչ միայն կը մտցնէ նրանց արքայութիւն, այլ և այս աշխարհում կ'աղատէ նրանց իսլամի երկաթէ լուծից։ Հայերը յամառում էին և այս պատճառով նրանց դատը Եւրոպայում, մանաւանդ այնժամանակները երբ արքունիքներն ու քաղաքականու-

թիւնը գտնուում էին կղերի ձեռքին, պլատօնական համակրանքների շրջանից հեռու չէր գնում:

Սա մի շատ խոշոր հանգամանք է հայոց հարցի պատմութեան, մէջ։ Բայց նրան ծուռ և միակողմանի բացարութիւն չը տալու համար յիշեցնենք որ վերևում արդէն ասել ենք թէ դաւանակցական միջամտութիւնն էլ միշտ պարտաւոր չէր ազատարար սուր մերկացնելու։ Ոստի ոչ ոք չէ կարող դրականապէս ասել, որ եթէ հայերը կաթօլիկութիւն ընդունէին, իսկոյն աւստրիական և գերմանական զօրքերը ճանապարհ կընկնէին դէպի Կովկաս։ Այն հանգամանքը, որ Խրայէլ Օրին գիմումներ անում էր ոչ թէ կաթօլիկութեան պաշտօնական հովանաւոր պաշտպան հզօր Թրանսիային, այլ գերմանական մանր իշխաններին և նրանց միջոցով և աւստրիական կայսրին, մի լաւ ապացոյց է որ Թրանսիան այն միջոցին ոչինչ տրամադրութիւն չունէր արևելեան քրիստոնեաների համար զինուրներ շարժելու։ Դաւանակցութիւնը արևելեան հարցի մէջ գործոն է իրական ոյժ է եղել միայն այն ժամանակ, երբ գախ էր առաջնորդելու և մանաւանդ վարագուրելու նուաճողական կրքերը քաղաքական-տնտեսական հողի վրայ։

Հայերի ազատական շարժումները մինչեւ տասնիններորդ դարը, ինչպէս յայտնի է, տեղի ունէին Հայաստանի այն մասում, որ պատկանում էր Պարսկաստանին։ Արևմտեան կամ թիւրքաց Հայաստանի մասինքիչ տեղեկութիւններ են հասել մեզ, բայց դրանք էլ վկայում են որ թիւրքահայերին միանգամայն անծանօթու խորթ չէր սեփական ջանքերով ազատութիւն ձեռքբերելու միտքը։ Որքան կարող ենք դատել հատ ու կտոր փաստերից, ուզմիկ տարրեր և տրամադրութիւն նրանց մէջ էլ կային։ Օրին ծրագիրների մէջ գտնում ենք այն հետաքրքրական գիծը որ թիւրքահայերն էլ իրանց զինուած խմբերով պիտի գային օգնելու պարսկահայերին ազատարար կոիւների մէջ։ Բայց որ սա չէ նշանակում թէ թիւրքահայը չէր զգում կուուի ան-

հրաժեշտութիւնը իր տանը, իր ազատութեան համար,  
դրա ապացոյցն էլ ունենք մեր առջեւ:

Օրին գործունէութեան ասպարէզ ընտրել էր միայն  
պարսկական Հայաստանը: Դրա պատճառը, երեխ, այն  
էր, որ Օսմանեան պետութիւնը, չը նայած իր անկ-  
ման բոլոր նշաններին, դեռ շատ զօրեղ ու ահարկու  
զինուորական կարողութիւն ունէր, մինչդեռ Պարսկաս-  
տանը համարեա հոգեվարքի մէջ էր և հեշտ էր երկում  
խլել նրա ձեռքից Հայաստանի մի մի մասը: Բայց ահա  
նրա մահից մի քանի տասնեակ տարի յետոյ, XVIII  
դարի երկրորդ կէսում, Հայաստանի գաւառներում ե-  
րևան է գալիս մի խորհրդաւոր ճանապարհորդ, որ ա-  
մեն տեղ տարածում էր յանդուգն, մի գերի ժողո-  
վրդի համար սարսափելի մաքեր: Այդ մարդը հսդկաբ-  
նակ Յովսէփ Էմինն էր, հայրենիքի ազատութեան կրա-  
կով վառուած մի մարդ, որ վճռել էր մենակ, ա-  
ռանց նիւթական և բարոյական մեծ նեցուկների,  
գլուխ բերել մի այնպիսի ապստամբական շարժում,  
որին մասնակցէր ամբողջ հայութիւնը: Նա քարոզում  
էր ազատութեան գաղափարը զիւղական երդիկների  
տակ, բացարում էր ստրկութեան ամբողջ սարսա-  
փը, թէ մարդկային կեանքը խաւար է, սպանդանոց է,  
թէ ժողովրդի առաջին թշնամիները այն հոգեորական-  
ներն են որոնք եկեղեցու հեղինակութեամբ սովորե-  
ցնում են մարդկանց ստրուկ անասուն մնալ, ձայն չը  
հանել բռնաւորների, կեղեքիչների դէմ:

Ապա խորհրդաւոր ճանապարհորդը պարզում էր  
իր ապշած ունկնդիրների առջեւ թէ գերի ժողովուրդը  
ինչպէս կարող է ազատուել: Պէտք է զինուել, պէտք է  
կռուել: Ժողովրդի ոյժերը մեծ են, բայց մենակ ժողո-  
վուրդը չէ կարող սկսել և ցանկալի վախճանին հասցը-  
նել գործը: Հարկաւոր է օգնութիւն դրաից: Յովսէփ  
Էմինը բացարում էր թէ ինչքը ինչպէս է ուզում սար-  
քել այդ դրսի օգնութիւնը, օտար միջամտութիւնը: Դա  
մի ամբողջ ծրագիր էր, որ այնուհետև էլ հայկական

ազատութեան գործիչների համար ամենալաւն էր համարում:

Ծրագիրը շատ պարզ էր և հեշտ էր լուծում մեծ կնճիռը: Վրաստանում թագաւորում էր Հերակլը. նաքաջ էր, յաղթական պատերազմներ էր մղել և անուն վաստակել: Նա Բագրատունի տոհմից էր, ուրեմն հայոց նախավերջին թագաւորական հին ցեղակից: Ահա նա էլ իր ձեռքը կ'առնէ Հայաստանի ազատութեան գործը և կը միացնէ անկախ Հայաստանն ու Վրաստանն մի թաղի տակ:—Տեսականապէս այդ հայեացքը կարծես թէ թելադրում էր պատմութեան երկաթէ լօգիկան: Երկու վիճակակից ազգեր, որոնցից մէկը արդէն սպառել էր իր ոյժերը իսլամի դէմ մղած դարաւոր պայքարների մէջ, իսկ միւսը դեռ շարունակում էր մենակ պայքարել, բայց արդէն շատ լաւ զգում էր որ այլ ևս պիտի կարողանայ պահուել իր բռնած դիրքում և կարօտ է օտար օգնութեան: Գուցէ այդ երկու ազգերի քաղաքական միութիւնը կարողանար ճիշտ որ մի նոր ճակատագիր ստեղծել Արևմտեան Ասիայում տանձուող քրիստոնէութեան համար. գուցէ հայ-վրացական միացած անկախութիւնը դառնար մի ոյժ, որ հիմնովին կերպարանափոխէր երկու ազգերի միանման տխուր ու ողբալի վիճակը, ամրացնելով նրանց ապագան, դարձնելով նրանց իրանց սեփական բախտի տէր: Յամենայն դէպս ծրագիր յղացողների քաղաքական միտքը նուրբ էր: Օրիի ժամանակ էլ կար այդ դաշնակցութեան միտքը, իսկ Օրիից յետոյ նոյն իսկ շատ քիչ էր մնում որ գործնական կերպարանք ստանայ, արդէն մտել էր կեանքի մէջ, արդէն ասպարէզ էր հանել ոյժեր:

Բայց, աւանդ, ծրագիրները գեղեցիկ են լինում թղթի վրայ: Իրականութիւնը իր բազմաթիւ դժբաղտ հանգամանքներով, որոնց մասին այստեղ խօսելու տեղը չէ, մերժել էր սկզբում այդ գեղեցիկ միտքը և այժմ էլ, էմինի ժամանակ, նրա մէջ ուտօպիա, երևակայութիւն աւելի շատ կար, քան գործնական հնարաւորու-

թիւն։ Բայց հարցը այդ չէ։ Համարձակ ազիտատօրին լսում էին գերիներին յատուկ սարսափով, բայց և համակրանքով, սիրով։ Իսկ Մուշի ս. Կարապետի վանքում էմինին ընդունեց մի հոգևորական, որ նրա դատապարտած տիպերից չէր, այլ մէկը այն բացառութիւններից, որոնք յաճախ էին պատահում մանաւանդ XVIII դարում և որոնց համար ժողովրդի ազատութիւնը մի սուրբ անհրաժեշտութիւն էր։

Այդ հոգևորականը վանքի վանահայր Յովհան աքրեալիսկոպոսն էր, որ վառուեց էմինի քարոզներով և դարձաւ նրա գործակալը, օգնականը։ Թողնելով թիւրքաց Հայաստանը, թափառական քարոզիչը գնաց Թիֆլիս՝ Հերակլին համոզելու համար։ Ս. Կարապետի վանահայրը նրան նամակներ էր գրում, խրախուսում էր, նըկարազրում էր իր պատրաստութիւնները։ Ահա ինչ էր նա գրում մի նամակի մէջ, որ Թիֆլիս էին բերել մի խումբ զինուած թիւրքահայեր։

Նամակաբերս, Մէլիք Ստեփանը, ձեզ կը յանձնէ 600 ոսկի ձեր ճանապարհ ծախսերի համար։ Խնդրում եմ որքան կարելի է շուտ ճանապարհ ընկնէք՝ մեզ մօտ գալու համար։ Իշխան Հերակլին յայտնեցէք իմ օրհնութիւնները և խնդրեցէք իմ կողմից, որ տայ ձեզ 20 վրացի ձիաւոր իրու ուղեկիցներ, որպէս զի դրանով համոզուեն այստեղի հայերը թէ նա ձեր բարեկամն է։ Իսկ եթէ մեր այս երկու ազգերի միութեան թշնամիները նրան արգելեն ձեր ինդիրքը կատարել, անհոգ եղէք Աստուած ողորմած է։ Բայց այդ դէպքում էր ստացէք այդ գումարը և ծախսեցէք ձեր պէտքերի համար։

Պտացայ ձեր նամակը, որի մէջ դուք խօսում էք այն ստոր վարմունքի մասին, որով ձեզ արգելը են հանդիսանում մեր այն գառնազգեստ գայլերը, որոնք միշտ պատճառ են եղել մեր թշուառ ազգի կորստեան և միշտ ծառայել են մեր թշնամիների շահերին։

Տասն և մէկ ամսից ի վեր գրաւոր դիմումներով համոզեցի և ձեր ծրագրին միացրի Թիւրքիայի մեր բոլոր ազգեցիկ հայերին կ. Պօլսում, Զիւմիւռնիայում, Կեսարիայում, Թոխաթում, Էրզրումում, Դիարբէքիրում և այլն։ Ինչ վերաբերում է կոռուղ ոյժերին, արդէն պատրաստ ունենք 40,000 մարդ։ Ասորիներն ու եղդի քրդերն էլ պատրաստ են մեզ հետ